2026 թվականի փետրվարի 15-ից մեկնարկել է 2026 թվականի գյուղատնտեսական տարվա համար գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության պայմանագրերի կնքման գործընթացը:

2026 թվականի գյուղատնտեսական տարվա համար ապահովագրության ենթակա են հետևյալ մշակաբույսերը՝ ծիրան, խաղող, խնձոր, դեղձ, սալոր, սեխ, ձմերուկ, կարտոֆիլ, բալ, կեռաս, ցորեն, գարի, վարսակ:

Ապահովագրվող ռիսկերն են՝ կարկտահարություն, կարկտահարություն և հրդեհ, գարնանային ցրտահարություն, երաշտ:

Ծիրանի, ցորենի, գարու, վարսակի դեպքում Կառավարությունը ֆերմերների փոխարեն կվճարի ապահովագրավճարի 40%-ը, իսկ մնացած մշակաբույսերի դեպքում՝ 60%-ը:

Տնտեսավարողները գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրեր կարող են կնքել Լիգա Ինշուրանս, Սիլ ինշուրանս, Նաիրի ինշուրանս, Ռեգո ինշուրանս, Արմենիա ինշուրանս, ԷՖԵՍ ինշուրանս ապահովագրական ընկերությունների հետ:

Ծրագրի մանրամասներին կարելի է ծանոթանալ https://mineconomy.am/page/1452 :